ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 մայիսի երեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

58
(3267)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՅՑ «ՎԻՎԱ ԱՐՄԵՆԻԱ»-Ի ԴԵՄ

«Ժողովուրդ» օրաթերթը դատական տեղեկատվական համակարգից տեղեկացավ, որ քաղաքացի Ալեքսան Ներսիսյանը դատարանում վիճարկում է «Վիվա Արմենիա» ընկերության գործողությունները՝ պնդելով, որ խախտվել է իր սեփականության իրավունքը: Գործը քննվում է Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Նանա Դալլաքյանի նախագահությամբ:

Քաղաքացի Ալեքսան Ներսիսյանը դատարան է դիմել «սեփականության իրավունքի խախտումը վերացնելուն պարտավորեցնելու պահանջով» ընդդեմ «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի: Թե կոնկրետ ինչ գործողությունների կամ հարաբերությունների հետեւանքով է առաջացել վեճը, դատական նյութերից առայժմ ամբողջությամբ պարզ չէ, սակայն արդեն ինքնին ձեւակերպումը՝ «սեփականության իրավունքի խախտումը վերացնել», հուշում է, որ խոսքը կարող է վերաբերել քաղաքացու գույքային իրավունքի սահմանափակման կամ օգտագործման հետ կապված խնդրին, որի մասով, քաղաքացու պնդմամբ, կա անբարեխիղճ վերաբերմունք «Վիվա Արմենիա» ընկերության կողմից: Գործը քննվում է դատավոր Նանա Դալլաքյանի վարույթում:

Հատկանշական է, որ վերջին տարիներին խոշոր ընկերությունների դեմ սեփականության իրավունքի պաշտպանության պահանջներով ներկայացվող հայցերը գնալով ավելանում են: Քաղաքացիները ավելի հաճախ են դատարաններում փորձում պաշտպանել իրենց իրավունքները՝ հատկապես այն դեպքերում, երբ բախվում են խոշոր բիզնեսի կամ ազդեցիկ կազմակերպությունների հետ:

Իսկ թե ինչ հանգուցալուծում կունենա Ալեքսան Ներսիսյանի եւ «Վիվա Արմենիա»-ի միջեւ ծագած իրավական վեճը, պարզ կդառնա դատական քննության ընթացքում:



Հայաստանում եւ Սփյուռքում բարեգործական ակտիվ գործունեություն ծավալող հայ գործարարների մասին պատմող շարքի շրջանակներում ներկայացնում ենք գործարար Կարեն Մարգարյանի գործունեությունը, ով առանց քաղաքական նպատակների օգնում է մարդկանց: Այս անգամ մեզ դիմած քաղաքացիների, ուսանողների եւ ծնողների բազմաթիվ արձագանքները վերաբերում են գործարար Կարեն Մարգարյանի բարեգործական գործունեությանը: Ըստ ստացված դիմումների՝ վերջին տարիների ընթացքում Մարգարյանի աջակցությամբ Հայաստանում եւ Սփյուռքում վիրահատության համար ֆինանսական օգնություն է տրամադրվել ավելի քան 100 երեխայի: Բաց աղբյուրներում առկա տեղեկությունների համաձայն՝ գործարարը ներգրավված է նաեւ հայկական մշակույթի եւ կրթության ոլորտներին առնչվող բարեգործական ծրագրերում: Մեզ դիմած ուսանողների փոխանցմամբ՝ այս եւ նախորդ ուսումնական տարիների ընթացքում նա վճարել է ավելի քան 60 ուսանողի ուսման վարձը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Մինչ իշխանությունները քաղաքական գործերով անցնող անձանց նկատմամբ ցուցադրում են գրեթե շուրջօրյա վերահսկողություն, պարզվում է՝ ընդամենը մեկ տարվա ընթացքում տնային կալանքի տակ գտնվող անձանցից արձանագրվել է 23 փախուստի դեպք: Ավելին՝ Պրոբացիայի ծառայությունն անգամ վիճակագրություն չունի՝ այդ անձինք հայտնաբերվե՞լ են, թե՞ ոչ: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանին, եւ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ 2025 թվականին Պրոբացիայի ծառայությունում տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցով հաշվառվել է 2053 անձ, իսկ ներկայում տնային կալանքի տակ է գտնվում 951 մարդ: Սակայն առավել ուշագրավը փախուստների վերաբերյալ տվյալներն են: Պաշտոնական պատասխանի համաձայն՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչեւ 2026 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է տնային կալանքի տակ գտնվող անձանց 23 փախուստի դեպք: Այլ կերպ ասած՝ տնային կալանքի համակարգից մարդիկ պարզապես հեռացել են, որոշ դեպքերում կատարել կրկնակի հանցագործություններ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ՏԿԵ նախարարությունը փաստացի հաստատում է, որ այս տարվա հունվարին «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում իրավիճակն այնքան էր սրվել, որ իշխանությունները ստիպված են եղել ներգրավվել աշխատակիցների եւ ղեկավարության միջեւ բանակցություններին: Թեեւ գերատեսչությունը խուսափում է անդրադառնալ «արհեստական գործադուլի» եւ հնարավոր սաբոտաժի մասին հարցադրումներին, պատասխանից ակնհայտ է դառնում՝ հանքում առկա դժգոհությունները ստիպել են ընկերությանը վերանայել աշխատավարձերն ու աշխատանքային պայմանները: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանից փորձել էր պարզել, թե ինչ տեղեկություններ ունի գերատեսչությունը Ախթալայի հանքի շուրջ վերջին շրջանում շրջանառվող լուրերի վերաբերյալ, մասնավորապես հնարավոր արհեստական գործադուլների եւ սաբոտաժի դրսեւորումների մասին: Ի պատասխան՝ նախարարությունը հայտնել է, որ այս տարվա հունվարին «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում տեղի ունեցած բողոքի ակցիայի շրջանակներում ՏԿԵ նախարարությունը եւ Լոռու մարզպետի աշխատակազմը հանդիպումներ ու քննարկումներ են ունեցել ընկերության աշխատակիցների եւ ղեկավար կազմի հետ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏՈՒԹՅԱՄԲ ՉԻ ՏՐՎԵԼ»

ArmLur.am-ը զրուցել է Հայաստանի դեմոկրատական կուսակցության հիմնադիր Արամ Սարգսյանի հետ:



- Պարոն Սարգսյան, ի՞նչ խորհուրդ ունի Ձեզ համար Մայիսի 9-ը, հատկապես այսօրվա պատերազմական իրավիճակի ֆոնին:

- Սա Մեծ հայրենական պատերազմի խորհրդանիշն է, պատերազմ, որտեղ մեր ժողովուրդը մեծագույն մասնակցություն է ունեցել: Մեր պապերն ու տատերը պայքարել են՝ պաշտպանելով թե՛ իրենց ընդհանուր պետությունը, թե՛ Հայաստանը: Շատ կարեւոր է նաեւ հիշել, որ այդ պայքարը ֆաշիզմի դեմ էր: Դա կարելի է համեմատել նույնիսկ Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության հետ. այստեղ տարբերություն չկա: Այդ օրը չհիշատակելը, կարծում եմ, պարզապես սրբապղծություն կլինի:

- Իսկ ի՞նչ նշանակություն ունի Ձեզ համար Շուշիի ազատագրման օրը:

- Մայիսի 8-9-ը նաեւ մեր հաղթանակի օրն է, երբ ազատագրվեց Շուշին: Այդ հաղթանակը երկար տարիներ մեր ազգային հպարտության կարեւոր խորհրդանիշներից էր: Ցավում եմ, որ այսօր մենք միայն հիշատակում ենք այդ օրը, բայց պետք է նորից հիշենք, որ մենք հաղթանակ ենք ունեցել, ազատագրել ենք Արցախը: Սա մեր պատմության կարեւոր էջերից է:

- Ի՞նչ ուղերձ ունեք երիտասարդ սերնդին:

- Ես շատ կուզեի, որ մեր երիտասարդները նորից հասկանան՝ իրենց պապերն ու տատիկները մասնակցել են այդ պատերազմներին, որպեսզի մենք այսօր ապրենք ազատ ու անկախ: Ազատությունը հեշտությամբ չի տրվել, եւ դրա արժեքը պետք է գիտակցել:

- Այսօր ինչպե՞ս եք գնահատում Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները:

- Ցավոք, հարաբերությունները բավական բարդ փուլում են: Վերջին տարիներին իշխանությունները վարել են հակառուսական քաղաքականություն, ինչը լրջորեն վնասել է հարաբերություններին: Եթե դու քեզ համարում ես դաշնակից պետություն, ապա պարտավոր ես այդ դաշնակցային հարաբերությունները պահպանել նաեւ գործնականում: Եթե չես ցանկանում այդ ճանապարհով գնալ, ապա պետք է հստակ հայտարարել դրա մասին:

- Ձեր կարծիքով՝ Հայաստանը կարո՞ղ է ամբողջությամբ հույս դնել Արեւմուտքի վրա:

- Կարծում եմ՝ մեր ժողովրդի մեծամասնությունը հասկանում է, որ միայն Եվրոպան, ԱՄՆ-ն կամ Ֆրանսիան չեն կարող ամբողջությամբ ապահովել մեր անվտանգությունը կամ ստեղծել այն տնտեսական պայմանները, որոնք մեզ անհրաժեշտ են: Իհարկե, ես կողմ եմ, որ Հայաստանը դառնա ինքնաբավ պետություն, ինքն ապահովի իր անվտանգությունը, բայց միաժամանակ շատ կարեւոր է ունենալ վստահելի բարեկամ պետություններ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀՀ-ՈՒՄ ՊԵՏՔ Է ՀԱՆՐԱՔՎԵ ԱՆՑԿԱՑՎԻ ՌԴ ՄԱՍՈՎ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը կոչ եւ միաժամանակ զգուշացնող հայտարարություններով է անդրադարձել Հայաստանի՝ Եվրամիությանը հնարավոր անդամակցության թեմային՝ ակնարկելով, որ Երեւանի եվրոպական ուղին կարող է հանգեցնել Ռուսաստանի հետ «բաժանման» եւ նույնիսկ ստեղծել ուկրաինական սցենարի ռիսկեր:

Պուտինը հայտարարել է, որ Մոսկվան չի պատրաստվում խոչընդոտել Հայաստանի որեւէ որոշման, եթե այն բխում է հայ ժողովրդի շահերից, սակայն ընդգծել է, որ Երեւանը պետք է հնարավորինս արագ հստակեցնի իր ռազմավարական կողմնորոշումը: Նրա խոսքով՝ Եվրամիության եւ ԵԱՏՄ-ի միջեւ գոյություն ունեն անհամատեղելի տնտեսական ու մաքսային կանոններ, որոնք անխուսափելիորեն խնդիրներ կստեղծեն. «Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի՝ Եվրամիությանը միանալու ծրագրերին, ապա դա, իհարկե, հատուկ քննարկման հարց է: Մենք այդ թեման վարչապետ Փաշինյանի հետ մեկ անգամ չէ որ քննարկել ենք: Եւ, իրականում, այստեղ արտառոց ոչինչ չենք տեսնում: Նա էլ կհաստատի՝ ես նրան այդ մասին մի քանի անգամ ասել եմ եւ հիմա էլ կարող եմ հրապարակայնորեն կրկնել:

Մենք աջակցում ենք այն ամենին, ինչը ձեռնտու է հայ ժողովրդին: Մենք հայ ժողովրդի հետ դարերով ձեւավորված առանձնահատուկ հարաբերություններ ունենք: Եվ եթե այս կամ այն որոշումը շահավետ է հայ ժողովրդի համար, խնդրեմ, մենք դեմ չենք լինի:

Սակայն, իհարկե, մենք պետք է հաշվի առնենք որոշ հանգամանքներ, որոնք կարեւոր են թե՛ մեզ համար, թե՛ մեր գործընկերների»:

Պուտինը հատուկ ընդգծել է, որ Ռուսաստանը շարունակում է մնալ Հայաստանի գլխավոր տնտեսական գործընկերը: Նրա խոսքով՝ երկու երկրների միջեւ առեւտրաշրջանառությունը 2025 թվականին կազմել է շուրջ 7 միլիարդ դոլար, ինչը Հայաստանի տնտեսության համար լուրջ ծավալ է՝ հաշվի առնելով երկրի մոտ 29 միլիարդ դոլար ՀՆԱ-ն: ՌԴ նախագահը շեշտել է, որ Հայաստանը ԵԱՏՄ շրջանակում ստանում է էական առավելություններ՝ գյուղատնտեսության, վերամշակող արդյունաբերության, մաքսային վճարների եւ միգրացիոն ոլորտներում, եւ այդ ամենը կարող է վերանայվել, եթե Երեւանը վերջնականապես ընտրի եվրոպական ուղղությունը: Առավել ուշագրավ էր Պուտինի ելույթի այն հատվածը, որտեղ նա Հայաստանի իրավիճակը համեմատեց Ուկրաինայի հետ: ՌԴ նախագահի խոսքով՝ ուկրաինական ճգնաժամը սկսվել է հենց Եվրամիության հետ ինտեգրման գործընթացից, երբ Մոսկվան եւ Բրյուսելը չեն կարողացել համաձայնության գալ տնտեսական ու մաքսային կանոնների շուրջ. «Եւ, իմ կարծիքով, ճիշտ կլիներ՝ թե՛ Հայաստանի քաղաքացիների նկատմամբ, թե՛ մեր նկատմամբ՝ որպես գլխավոր տնտեսական գործընկերոջ, հնարավորինս շուտ հստակ որոշում կայացնել: Օրինակ՝ կարելի է հանրաքվե անցկացնել: Դա, իհարկե, մեր գործը չէ, բայց, սկզբունքորեն, միանգամայն տրամաբանական կլիներ հանրաքվե անցկացնել եւ քաղաքացիներին հարցնել, թե որն է լինելու նրանց ընտրությունը: Դրան համապատասխան մենք էլ կանեինք համապատասխան հետեւություններ եւ կգնայինք այսպես ասած՝ փափուկ, ինտելիգենտ եւ փոխշահավետ բաժանման ճանապարհով: Հասկանում եք, հիմա մենք տեսնում ենք այն ամենը, ինչ տեղի է ունենում ուկրաինական ուղղությամբ: Իսկ ինչի՞ց սկսվեց այդ ամենը: Ուկրաինայի՝ Եվրամիություն մտնելու կամ անդամակցելու փորձերից: Դա միայն առաջին փուլն էր: Սա լուրջ հարց է: Այդ պատճառով պետք չէ իրավիճակը հասցնել ծայրահեղության: Պետք է ժամանակին պարզապես ասել՝ մենք այսպես ենք անելու կամ այնպես: Այստեղ արտառոց ոչինչ չկա: Պետք է ամեն ինչ հաշվարկել: Եւ հայկական կողմը պետք է հաշվարկի, եւ մենք պետք է հաշվարկենք: Ես հիմա պատասխանում եմ եւ մտածում եմ, որ միանգամայն հնարավոր կլիներ այս հարցը դնել ԵԱՏՄ-ի հերթական գագաթնաժողովի օրակարգում»: Նա նաեւ նշել է, որ Հայաստանի իշխանությունները պետք է հնարավորինս արագ եւ հստակ հայտարարեն իրենց վերջնական որոշման մասին՝ առաջարկելով նույնիսկ հանրաքվե անցկացնել՝ հասկանալու համար, թե ինչ ընտրություն է կատարում հայ ժողովուրդը: Պուտինի հայտարարությունները հնչել են այն ֆոնին, երբ Մոսկվան արդեն դժգոհություն է հայտնել Երեւանում կայացած «Հայաստան-Եվրամիություն» եւ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովների ընթացքում հնչած հակառուսական հայտարարությունների վերաբերյալ: Ավելի վաղ ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը հայտարարել է, որ Ռուսաստանը Հայաստանից պարզաբանումներ է ակնկալում Երեւանում Վլադիմիր Ջելենսկիի հնչեցրած հակառուսական հայտարարությունների վերաբերյալ:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԳՅՈՒՄՐԻ

Երեւանում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին եւ «Երեւանյան երկխոսություն» համաժողովին մասնակցած թուրք լրագրողները այց են կատարել նաեւ Գյումրի՝ հետաքրքրվելով հայ-թուրքական սահմանի եւ Գյումրի-Կարս երկաթուղու վերագործարկման հեռանկարներով: Այս մասին հայտնում է Ermenihaber.am-ը: Լրագրողները եղել են երկաթուղու տարածքում, տեղում ուսումնասիրել ենթակառուցվածքները եւ անդրադարձել անցակետի հնարավոր բացման նշանակությանը: Հայ-թուրքական սահմանին նրանք հանդիպել են Գյումրու «Ասպարեզ» լրագրողների ակումբի նախագահ Լեւոն Բարսեղյանի հետ, որի ընթացքում քննարկվել են սահմանի վերաբացման տնտեսական եւ տարածաշրջանային հնարավոր ազդեցությունները: Բարսեղյանի խոսքով՝ Ախուրիկի կայարանը դեռ Սառը պատերազմի տարիներից ձեւավորված երկաթուղային համակարգի կարեւոր հատված է եղել եւ հանդիսանում է Հայաստանից դեպի Թուրքիա եւ այնուհետեւ Եվրոպա տանող վերջին կայարանը: Նրա գնահատմամբ՝ այդ ուղղությունը կարող է ապագայում դառնալ Ասիան եւ Եվրոպան կապող «Միջին միջանցքի» մի մասը: Նա նաեւ հիշեցրել է, որ երկաթուղային երթուղին գործել է խորհրդային տարիներին եւ կարճ ժամանակով բաց է եղել նաեւ 1992-1993 թվականներին: Ըստ Բարսեղյանի՝ սահմանի վերաբացումը կարող է էական ազդեցություն ունենալ հայ-թուրքական տնտեսական հարաբերությունների եւ առեւտրաշրջանառության զարգացման վրա՝ նպաստելով նաեւ տարածաշրջանային համագործակցության ընդլայնմանը:

Ա. Վ.

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՐՁՆԵԼ

Ներքին գործերի նախարարությունն առաջարկում է 16 տարին լրացած անձանց համար պարտադիր դարձնել նույնականացման քարտ ունենալը: Այս մասին Ազգային Ժողովի արտահերթ նիստում հայտնեց ներքին գործերի նախարար Արփինե Սարգսյանը՝ առաջին ընթերցմամբ ներկայացնելով «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքում եւ կից օրենքներում փոփոխությունների նախագծերի փաթեթը:

«Սա կարեւոր է այն տեսանկյունից, որ մենք ներպետական գործառնությունների համար ուզում ենք դիտարկել նույնականացման քարտը որպես շրջանառության մեջ գտնվող հիմնական փաստաթուղթ, որը թույլ կտա հանրային ծառայություններից շատ ավելի սահուն կերպով օգտվել»,- ասաց Սարգսյանը: 6-16 տարեկան անձանց համար նախատեսվում է կամարտահայտության սկզբունքով նույնականացման քարտ ունենալու հնարավորություն, իսկ մինչեւ 6 տարեկան անձանց համար ծննդյան վկայականն է դիտարկվելու որպես անձը հաստատող փաստաթուղթ:

ՈՐՈՇՈՒՄ ԿԱԼԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ դատարանի որոշմամբ ԱԱԾ շենքի ուղղությամբ հրավառ շշեր նետած 32-ամյա երիտասարդի կալանքը 2 ամսով երկարաձգվել է: ArmLur.am-ը արդեն տեղեկացրել էր, որ այս տարվա մարտի 6-ին Երեւան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի բնակիչ, 1994 թվականին ծնված Ռաֆֆի Մանդալյանը հրավառ շշեր էր նետել ՀՀ Ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի վրա: Ըստ ArmLur.am-ի տեղեկությունների՝ քաղաքացի Ռաֆֆի Մանդալյանը իրավապահներին ցուցմունք է տվել, բացատրել, որ իր քայլը պայմանավորված է եղել խորը զայրույթով եւ հիասթափությամբ: Նա նշել է, որ իրեն մտահոգում է հայրենիքի անվտանգության վիճակը, եւ, իր համոզմամբ, հասարակության մեջ առկա է անտարբերություն եւ լռություն այդ հարցի շուրջ: Մանդալյանի խոսքով՝ իր գործողությամբ փորձել է ցույց տալ, որ «բոլորը անտարբեր չեն»: Նրա նպատակն է եղել կոտրել, իր ձեւակերպմամբ, հասարակական լռությունը եւ ուշադրություն հրավիրել այն հարցի վրա, որ քաղաքացիների մի հատվածը մտահոգված է երկրի ապագայով: Վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում է հարուցված ահաբեկչության քրեական վարույթի շրջանակներում: Նա կալանավորված է:

Ք. Մ.

ՍՆԱՆԿ Է ՃԱՆԱՉՎԵԼ

Սնանկության դատարանի դատավոր Սամվել Թադեւոսյանը որոշել է սնանկ ճանաչել ԱԺ նախկին պատգամավոր, գործարար Տիգրան Արզաքանցյանին: Հիշեցնենք, որ Տիգրան Արզաքանցյանին սնանկ ճանաչելու գործն արդեն 4 տարի է՝ քննվում էր ներպետական դատարաններում: Նախկին պատգամավորին սնանկ ճանաչելու պահանջով դատարան էր դիմել գործարար Սմբատ Նասիբյանը: Իսկ որպես հիմք նշվել էր միանձնյա արբիտրաժային տրիբունալի 07.10.2013թ. վճիռը: Ըստ դրա՝ ճանաչվել էր Սմբատ Նասիբյանի սեփականության իրավունքը հօգուտ իրեն պատասխանողի կողմից գրավադրված «Էյ Էմ Ջի Էմ» ՍՊԸ-ի բաժնեմասի 20 տոկոսի հանդեպ՝ փոխառության պայմանագրով պատասխանողին տրամադրված 4.350.000 ԱՄՆ դոլարի դիմաց: Որոշվել էր բռնագանձում տարածել նաեւ պատասխանող Տիգրան Արզաքանցյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանում կամ Հայաստանի տարածքից դուրս գտնվող դրամական միջոցների կամ այլ գույքի վրա՝ 965.260 ԱՄՆ դոլարի կամ դրան համարժեք ՀՀ դրամի կամ այլ արտարժույթի չափով: Հիշեցնենք որ ՀՀ սնանկության դատարանի դատավոր Լիլիթ Կատվալյանը դեռ 2022թ. սեպտեմբեր ամսին ԱԺ նախկին պատգամավոր Տիգրան Արզաքանցյանին սնանկ էր ճանաչել: Դրանից հետո գործը պտտվել էր բոլոր դատարաններում եւ կրկին ուղարկվել սնանկության դատարան:

ԻՆՉ ՈՒՆԻ

ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ ՈՒ ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ

2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ քաղաքական ուժերը հերթով ներկայացնում են իրենց նախընտրական ցուցակները, իսկ հանրության ուշադրության կենտրոնում արդեն ոչ միայն անուններն են, այլեւ այդ անունների անցած ճանապարհն ու կուսակցական կարողությունը:

ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել առաջադրված 19 կուսակցությունների եւ դաշինքների առաջնորդներին՝ նրանց կենսագրությունն ու ունեցվածքը: Այս անգամ ներկայացնում ենք «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությանը, որի ընտրացուցակը գլխավորում է կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանը՝ ընտրություններին մասնակցելով 14 համարի ներքո:

Ի՞նչ ունի Սուրեն Պետրոսյանը

2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Սուրեն Պետրոսյանն ունի երեք միավոր անշարժ գույք: Դրանց թվում են Տավուշի մարզի Ենոքավան համայնքում գտնվող հողամաս, ինչպես նաեւ երկու բնակարան Երեւանում: Անշարժ գույքի մի մասը ձեռք է բերվել գնման, մյուս մասը՝ նվիրատվության եղանակով: Տրանսպորտային միջոցներից նա հայտարարագրել է 2018 թվականի արտադրության GENESIS մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2023 թվականին, ինչպես նաեւ 2008 թվականի արտադրության SKODA մակնիշի ավտոմեքենա, որը ստացել է նվիրատվությամբ:

Բանկային հաշիվներում առկա միջոցները կազմել են 826 հազար դրամ եւ 7 հազար 248 եվրո, իսկ կանխիկ դրամական միջոցները՝ 4 միլիոն 269 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 178 հազար եվրո, որը ներկայացված է որպես շահաբաժին: Եկամուտ վճարող կազմակերպությունը Edelweiss Group-ն է: Միաժամանակ հայտարարագրված է նաեւ վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդ՝ 63 միլիոն 185 հազար դրամ, որը կապված է անշարժ գույքի հետ:

Կրթություն եւ մասնագիտական ուղի

Սուրեն Պետրոսյանը ծնվել է 1988 թվականի մարտի 10-ին Երեւանում: 2008 թվականին ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը՝ ստանալով թենիսի մարզիչ-մանկավարժի որակավորում: Այնուհետեւ ուսումը շարունակել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում եւ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում՝ ստանալով կառավարման, քաղաքագիտության եւ պետական ու մունիցիպալ կառավարման մասնագիտություններով բարձրագույն կրթություն եւ մագիստրոսի աստիճաններ: 2018 թվականին ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրան, իսկ 2024 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա նաեւ մասնակցել է մի շարք միջազգային կրթական ծրագրերի եւ քաղաքական դասընթացների՝ Օքսֆորդի համալսարանում, Գերմանիայում, Չինաստանում, Շվեդիայում եւ Հունաստանում:

Քաղաքական գործունեություն

2014-2016 թվականներին Սուրեն Պետրոսյանն աշխատել է ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունում՝ զբաղեցնելով Կապի եւ տեղեկատվայնացման վարչության պետի պաշտոնը: 2016-2024 թվականներին դասավանդել է Հայաստանի պետական կառավարման ակադեմիայում: Քաղաքական գործունեության մեջ ներգրավվել է 2019 թվականին՝ դառնալով «Ժողովրդավարական համախմբում» քաղաքական նախաձեռնության համահիմնադիր: Հետագայում եղել է կուսակցության հիմնադիր անդամ, իսկ 2021 թվականի փետրվարի 27-ից ղեկավարում է «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆՎՃԱՐ ԲՆԱԿԱՐԱՆ

Միասնության թեւեր» կուսակցության վարչապետի թեկնածու Արման Թաթոյանը ներկայացրել է կուսակցության նախընտրական ծրագրի կետերից մեկը՝ ուղղված բազմազավակ ընտանիքների աջակցությանը: «Բազմազավակ ընտանիքին, չորրորդ երեխայից սկսած, կտրամադրենք անվճար բնակարան մարզերում»,- հայտարարել է նա: Արման Թաթոյանի խոսքով՝ բազմազավակ ընտանիքների համար նախատեսված են նաեւ հարկային արտոնությունների հետ կապված այլ ծրագրեր, որոնք եւս փուլ առ փուլ կներկայացվեն:

ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը հանդիպել է «Կրթություն եւ համերաշխություն» արհմիության նախաձեռնությամբ իրականացվող «Երեւանյան քաղաքացիական ճամփորդություն» կրթական նախագծի շրջանակներում նախագահական նստավայր այցելած Շիրակի մարզի տարբեր համայնքների մի խումբ դպրոցականների: Սովորողները նախ շրջայց են կատարել Հանրապետության նախագահի նստավայրում, ծանոթացել համալիրի պատմությանը: Շրջայցի ավարտին նրանք հանդիպել են նախագահի հետ: Նախագահ Վահագն Խաչատուրյանը դպրոցականների հետ զրուցել է կրթության, գիտակից ու պատրաստված քաղաքացի դառնալու կարեւորության եւ մի շարք այլ թեմաների մասին: Հանդիպման ավարտին սովորողները նախագահին են ուղղել իրենց հետաքրքրող հարցերը տարբեր թեմաների վերաբերյալ:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ապրիլի 1-ին ՌԴ կատարած այցի ժամանակ նախագահ Վլադիմիր Պուտինին հայտնել է, որ քարոզարշավի պատճառով չի կարողանալու մասնակցել մայիսի 28-ին Աստանայում կայանալիք ԵԱՏՄ ղեկավարների նիստին: «Այն ժամանակ նույնիսկ չգիտեի՝ հրավեր լինելո՞ւ է, թե՞ ոչ, բայց քաղաքավարությունից ելնելով եւ հարգանքի արտահայտման տրամաբանությամբ նախապես տեղեկացրել եմ, որ չեմ կարողանալու մասնակցել մայիսի 9-ի շքերթին եւ մայիսի 28-ին էլ չեմ կարողանալու մասնակցել»,- ասել է Փաշինյանը: Նա հավելել է, որ փոխվարչապետ Միեր Գրիգորյանը կմասնակցի միջոցառմանը:

ԾԱՌՈՒԿՅԱՆԸ ԲԱՑԱՌՈՒՄ Է

«Բարգավաճ Հայաստանի» առաջնորդ Գագիկ Ծառուկյանը բացառում է Նիկոլ Փաշինյանի հետ հետընտրական համագործակցությունը: Այդ մասին նա ասել է լրագրողների հետ զրույցում. «Բացառում եմ, որովհետեւ հրապարակում, երբ բոլորս սպասում էինք արդարության սկզբունքին, ես եմ կանգնել իր կողքին ժողովրդի հետ, հիշո՞ւմ եք: Գնացել եմ հրապարակ, ասել եմ՝ ժողովուրդ ջան, էսօր մեզ պետք է փոփոխություն, ո՞ւմ եք ձեր ձայնը տալու՝ Սասուն Միքայելյանին, Արարատ Միրզոյանին, թե՞ Նիկոլ Փաշինյանին, որովհետեւ դեմքերը այդ երեքն էին, բոլորը գոռացել են՝ Նիկոլ Փաշինյան: Ասել եմ՝ մինչեւ վերջ կանգնում ենք, Նիկոլ Փաշինյանին ընտրում ենք վարչապետ: Ասում էր՝ ժողովուրդը տուգանելու մատերիալ չի, «Ղարաբաղը Հայաստան է ու վերջ» եւ այլն: Մենք եղանք իրենց հետ գործընկեր, իր ասածները չկատարեցինք, որովհետեւ անընդունելի էր, անմիջապես դրեց հրապարակում մեր նախարարներին հանեց, հանե՞ց, էսօր մենք պատասխանատու չենք չէ՞ եղածի համար»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԻՆՉ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է ՍԿՍՎԵԼ

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ ՉԻ ԿԱՅԱՑՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարանում երեկ նիստ է կայացել Առուշ Առուշանյանի քրեական գործով: Դատավոր Տիգրան Դավթյանը որոշում է կայացրել վերաբացել քրեական գործը եւ պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

Հակակոռուպցիոն դատարանը՝ դատավոր Տիգրան Դավթյանի նախագահությամբ, հեռացել էր առանձին սենյակ՝ Գորիսի համայնքապետ Առուշ Առուշանյանի պատիժն ազատազրկմամբ փոխարինելու հարցով որոշում կայացնելու նպատակով: Գործը տեղափոխվել էր Հակակոռուպցիոն դատարան՝ Վճռաբեկ դատարանի որոշումից հետո, որով բեկանվել էր Առուշ Առուշանյանի պատիժն ազատազրկմամբ փոխարինելու որոշման դեմ բողոքները մասնակի բավարարելու եւ դրա արդյունքում նրա նկատմամբ ընտրված ազատազրկումը երեք ամսով ծանրացնելու մասին Վերաքննիչ դատարանի որոշումը: Վճռաբեկ դատարանը արձանագրել էր ընդդատության խախտում եւ որոշել գործն ուղարկել Հակակոռուպցիոն դատարան՝ նոր քննության, որտեղ էլ դատավոր Տիգրան Դավթյանի նախագահությամբ քննություն է իրականացվել:

Հիշեցնենք, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Գնել Գասպարյանի նախագահությամբ, 2022 թվականի մարտի 28-ին հրապարակել էր Առուշ Առուշանյանի եւ մյուսների գործով վճիռը: Այդ վճռով Առուշանյանն արդարացվել էր իրեն մեղսագրվող ընտրական ենթադրյալ հանցավոր արարքների դրվագով, իսկ մյուս դրվագով մեղավոր էր ճանաչվել եւ դատապարտվել 1 տարի 6 ամիս ազատազրկման: Հաշվակցելով Առուշանյանի՝ ութ ամիս արգելանքի տակ գտնվելու ժամկետը՝ դատարանը որպես վերջնական պատիժ սահմանել էր վեց ամիս ազատազրկում, որը պայմանականորեն չէր կիրառվել: Դատարանը Առուշանյանի նկատմամբ սահմանել էր նաեւ 1.5 տարվա փորձաշրջան, ինչպես նաեւ որպես լրացուցիչ պատիժ կիրառել էր տուգանք եւ հինգ տարի ժամկետով ՏԻՄ ղեկավար պաշտոն զբաղեցնելու սահմանափակում: Արդարացվել էին նաեւ Քարահունջ բնակավայրի ղեկավար Լուսինե Ավետյանը եւ ամբաստանյալներից եւս երկուսը՝ Սամվել Դինունցը եւ Հրայր Բաղդասարյանը, իսկ Էրիկ Աղաջանյանն ու Հարութ Լալազարյանը մեղավոր էին ճանաչվել:

Դատական ակտի դեմ բողոքներ էին ներկայացվել, սակայն այն մտել էր օրինական ուժի մեջ: Այնուհետեւ Պրոբացիայի ծառայությունը դիմել էր Գորիսի ավագանուն՝ Առուշանյանի լիազորությունները դադարեցնելու հարցով, սակայն ավագանին մերժել էր միջնորդությունը՝ արձանագրելով, որ դա չի բխում իրենց լիազորություններից:

Արդյունքում ԱՆ Պրոբացիայի ծառայության Սյունիքի մարզային մարմնում կազմվել էր արձանագրություն՝ Առուշանյանի կողմից պատժից խուսափելու վերաբերյալ, եւ միջնորդություն էր ներկայացվել ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ Առուշ Առուշանյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը՝ հինգ տարի պետական պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկելը, ազատազրկմամբ փոխարինելու, ինչպես նաեւ ազատազրկման ձեւով պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշումը վերացնելու եւ պատիժը կրելու հարցով: Միաժամանակ, Առուշ Առուշանյանը վիճարկել էր Պրոբացիայի ծառայության գործողությունների իրավաչափությունը, սակայն դատարանը մերժել էր բողոքը: Դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվել էր գրավոր ընթացակարգով եւ նույնպես մերժվել:

Ինչ վերաբերում է Պրոբացիայի ծառայության միջնորդությանը, ապա Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Վարսենիկ Մելքոնյանի նախագահությամբ, սեպտեմբերի 10-ին մասնակի բավարարել էր միջնորդությունը՝ Առուշ Առուշանյանի նկատմամբ 2022 թվականի մարտի 28-ի դատավճռով նշանակված պատիժը՝ ՏԻՄ ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից հինգ տարի ժամկետով զրկելը, փոխարինելով 1 տարի 8 ամիս 3 օր ժամկետով ազատազրկմամբ: Այս դատական ակտը եւս բողոքարկվել էր թե՛ դատախազության, թե՛ Առուշանյանի պաշտպանի կողմից:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2026 թվականի ապրիլ-մայիս ամիսների հրամաններով՝ դատախազությունում տեղի են ունեցել կադրային մի շարք փոփոխություններ: Մասնավորապես՝ Հրանտ Ներսիսյանը նշանակվել է Գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով Գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնից:

Անդրանիկ Շահբազյանը նշանակվել է Գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով Գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազի պաշտոնից: Գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ Տիգրան Ենոքյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Գուրգեն Գուրգենյանը նշանակվել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնից: Մերինե Սահակյանը նշանակվել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի պաշտոնին՝ ազատվելով նույն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնից:

Արարատի մարզի դատախազ Վարդան Պողոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Արարատի մարզի դատախազի տեղակալ Ռեմ Ռշտունին ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Գագիկ Մնացականյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Շիրակի մարզի դատախազի տեղակալ Արեգ Խաչատրյանը փոխադրվել է Արարատի մարզի դատախազի տեղակալի պաշտոնին. Արեգ Խաչատրյանին է վերապահվել Արարատի մարզի դատախազի պարտականությունների կատարումը: Ռաֆայել Արսենյանը նշանակվել է Արարատի մարզի դատախազի տեղակալի պաշտոնին՝ ազատվելով Արարատի մարզի դատախազության ավագ դատախազի պաշտոնից:

Գեղարքունիքի կայազորի զինվորական դատախազության դատախազ Աշոտ Հարությունյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Արարատի կայազորի զինվորական դատախազության դատախազ Ալիկ Գրիգորյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Կապանի կայազորի զինվորական դատախազության դատախազ Պետրոս Հարությունյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

ՇԵՆԳԱՎԻԹԻ ԿՐԱԿՈՑՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մայիսի 5-ին Երեւանում կրակոցներ էին հնչել, ինչի հետեւանքով մեկ անձ էր սպանվել: Շենգավիթի բաժնում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Բագրատունյաց 13 հասցեում կրակոցներ են հնչել, եւ կա տուժած: Shamshyan.com-ը հայտնել էր, որ դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, որոնք հրաժարվել էին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին, որ մահացածը մոտ 40 տարեկան է, ում անունը Արտյոմ է: Իսկ ի՞նչն է եղել սպանության պատճառը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Բագրատունյաց 13 հասցեում Շենքի բնակիչներից մեկը գինովցած պարբերաբար բակի բնակիչների անդորրն է խախտել: Բակի բնակիչները հորդորել են իրենց անդորրը չխախտել ու նկատողություն են արել տղամարդուն: Արդյունքում տղամարդը բնակիչների նկատողության, նախատինքների մասին պատմել է իր երեխաներին: Վերջիններս էլ եկել են Բագրատունյաց 13 հասցեի զրուցարան՝ պարզաբանումների, որի ժամանակ խոսակցությունը թեժացել է, եւ հնչել է կրակոց, ու մեկ անձ սպանվել է: Այս պահին կրակոցների դեպքով դեռեւս ձերբակալված անձ չկա:

Ք. Մ.

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՍԿՍԵԼ Է ՍՏՈՒԳԵԼ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն սկսել է ստուգումները Թալինի համայնքապետ Տավրոս Սափեյանի գործողությունների մասով: Նախաքննական մարմինը փաստաթղթեր է ուսումնասիրում եւ օպերատիվ աշխատանքներ իրականացնում: Հիշեցնենք, որ մայիսի 3-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության հիմնադիր Դանիել Իոննիսյանը հայտնել էր. «Երկու օր տեւած քննարկումների արդյունքում «Անկախ դիտորդ» դաշինքում որոշեցինք, որ Թալին համայնքի ղեկավարի որոշմամբ համայնքապետարանի կողմից սոցիալական օգնության բաժանումը, մեր գնահատմամբ, խախտում է ՏԻՄ օրենքի վերաբերելի կարգավորումները եւ առերեւույթ հանցակազմ է պարունակում ՀՀ Քրեական օրենսգրքի 221-րդ հոդվածով: Մասնավորապես, ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ համայնքապետարանի կողմից, որպես սոցիալական աջակցություն, չի կարող դրամական (հենց գումարի տեսքով) օգնություն տրվել: Իսկ ՔՕ 221-րդ հոդվածն էլ սահմանում է, որ կուսակցության անդամի կողմից կամ նրա անունից այս փուլում գումար բաժանելն արգելված է: Ըստ էության, Թալինի համայնքապետի որոշումները չեն բխում իր ինստիտուցիոնալ գործունեությունից, քանի որ առերեւույթ խախտում են ՏԻՄ օրենքով նշված արգելքը, հետեւապես, մեր գնահատմամբ, պետք է դիտարկվեն ՔՕ 221-րդ հոդվածի կոնտեքստում: Շուտով հանցագործության մասին հաղորդումը կուղարկվի իրավապահներին»:

Խնդրո առարկա հոդված 221-ը հանրաքվեի կամ ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելն է, որի առաջին կետով՝ հանրաքվեի կամ ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչեւ հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքների ամփոփումը (իսկ Ազգային Ժողովի ընտրությունների դեպքում՝ Ազգային Ժողով ընտրվելու մասին որոշումը) թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անդամի կամ լիազորված անձի, վստահված անձի, հանրաքվեի նախաձեռնող խմբի անդամի կամ լիազոր ներկայացուցչի կողմից անձամբ կամ նրանց (այդ թվում՝ կուսակցության կամ դաշինքի) անունից կամ որեւէ այլ եղանակով կամ բարեգործության անվան տակ ընտրողներին, ինչպես նաեւ հանրաքվեի մասնակիցներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ, սննդամթերք, արժեթուղթ, ապրանք (բացի կուսակցության անվանումը կամ խորհրդանիշները կամ թեկնածուի անունը, ազգանունը կամ պատկերը բովանդակող եւ նվազագույն աշխատավարձի եռապատիկը չգերազանցող արժեքով քարոզչական տպագիր եւ այլ նյութի կամ առարկայի) տալը (խոստանալը) կամ ծառայություններ մատուցելը (խոստանալը) կամ բարեգործության հետ միաժամանակ նախընտրական կամ հանրաքվեի քարոզչություն իրականացնելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով: Այսինքն՝ Տավրոս Սափեյանին սպառնում է ընդհուպ ազատությունից զրկում, եթե, իհարկե, Հակակոռուպցիոն կոմիտեն անկողմնակալություն եւ պրոֆեսիոնալիզմ ցուցաբերի, այլ ոչ թե առաջնորդվի քաղաքական նպատակահարմարությամբ:

Ք. Մ.

● *Մայիսի 4-ից 10-ը ՆԳՆ 112 օպերատիվ կառավարման կենտրոնում գրանցվել է 438 դեպք, որից 143-ը՝ արտակարգ:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՔՈՐՔԵՐԻՑ՝ ԿԱԴՐԵՐԻ ՌԵԶԵՐՎ

Մի քանի օր առաջ ԱԱԾ սահմանապահ զորքերի ենթասպա Թաթուլ Աղամյանին ուղարկել են կադրերի ռեզերվ: Նա 44-օրյա պատերազմի մասնակից է, 14 տարի ծառայել է սահմանապահ զորքերում, եւս 2 տարի՝ զինված ուժերում, ծառայության ընթացքում միշտ եղել է բարեխիղճ, երբեք նկատողություն չի ստացել: Նա վերջերս 3 ամիս ծառայողական գործուղման մեջ է եղել Մեղրիում: Թաթուլ Աղամյանին կադրերի ռեզերվ ուղարկելու պատճառը չեն հայտնել, սակայն պատճառը պարզ է. Թաթուլը «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորության թեկնածու, այդ դաշինքի նախընտրական ցուցակի 37-րդ համար, օրերս Նոյեմբերյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնից սեփական ցանկությամբ հրաժարական տված Միեր Աղամյանի հարազատ եղբայրն է: Միեր Աղամյանը համայնքի ղեկավարի առաջին տեղակալի պաշտոնից հրաժարական է տվել, քանի որ լինելու էր պատգամավորության թեկնածու: Նա շարունակում է մնալ Նոյեմբերյան համայնքի ավագանու անդամ: Թաթուլ Աղամյանին սահմանապահ զորքերում ծառայությունից ոչ թե ազատել են, այլ ուղարկել են կադրերի ռեզերվ, որպեսզի նա չկարողանա վերադասի այդ որոշումը դատական կարգով բողոքարկել: Ահա այսպիսի բարքեր են տիրում Նիկոլ Փաշինյանի իշխանության ժամանակ:

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԳՆԱՑ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության նախընտրական ցուցակի 49-րդ տեղում է: Նա մայիսի 8-ից հունիսի 5-ը գտնվելու է արձակուրդում, որպեսզի նախընտրական քարոզչությամբ զբաղվի: Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը պատգամավորության թեկնածու չէ, սակայն նա նույնպես արձակուրդ է գնացել, որպեսզի նախընտրական քարոզչությամբ զբաղվի: Մայիսի 8-ից արձակուրդ է մեկնել նաեւ Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, ով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Դիլիջանի տարածքային կազմակերպության ղեկավարն է: Դ. Սարգսյանը Ֆեյսբուքում դիմել է դիլիջանցիներին. «Այդ օրերին գտնվելու եմ արձակուրդում՝ քարոզարշավին ակտիվ մասնակցելու եւ իմ աջակցությունը հայտնելու «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը»: Դ. Սարգսյանը Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակվել վարչապետ Ն. Փաշինյանի որոշմամբ 2021թ. փետրվարի 26-ին: 2021թ. հոկտեմբերի 17-ին Դիլիջան համայնքի ավագանու ընտրություններով ձեւավորված ավագանու կողմից ընտրվել է համայնքի ղեկավար: 2026թ. աշնանը Դիլիջան համայնքում նախատեսված են ավագանու հերթական ընտրություններ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԻՆՉ ՈՒՆԻ

Ո՞Վ Է ԲՀԿ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ 2-ՐԴ ՀԱՄԱՐԸ

2026 թվականի հունիսի 7-ին նախատեսված Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ ArmLur.am-ը շարունակում է ներկայացնել ընտրապայքարին մասնակցող քաղաքական ուժերի առաջնորդների կենսագրություններն ու գույքային հայտարարագրերը:

Այս անգամ ուշադրության կենտրոնում է 7-րդ համարի ներքո առաջադրված «Բարգավաճ Հայաստան» կուսակցության ցուցակի երկրորդ համարը՝ Անդրանիկ Թեւանյանը:

Ի՞նչ է հայտարարագրել Անդրանիկ Թեւանյանը

2025 թվականի գույքի եւ եկամուտների հայտարարագրի համաձայն՝ Անդրանիկ Թեւանյանն ունի ինչպես անշարժ, այնպես էլ շարժական գույք: Հայտարարագրված տվյալներով՝ նա Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում ժառանգությամբ ձեռք բերված հողամաս ունի: Բացի այդ, նրա սեփականության մեջ են մտնում ավտոտնակ եւ Երեւանի կենտրոնում գտնվող բնակարան, որը ձեռք է բերվել գնման եղանակով: Շարժական գույքի ցանկում ներառված է նաեւ 2018 թվականի արտադրության HONDA մակնիշի ավտոմեքենա:

Ֆինանսական միջոցների մասով հայտարարագրում նշված են բանկային հաշիվների համեմատաբար փոքր մնացորդներ եւ զգալի կանխիկ միջոցներ տարբեր արժույթներով: Մասնավորապես՝ բանկային հաշիվների մնացորդ՝ 208 հազար 98 դրամ, կանխիկ միջոցներ՝ 107 հազար 200 եվրո,110 հազար 300 ԱՄՆ դոլար,10 միլիոն 600 հազար դրամ: Հայտարարագրի համաձայն՝ հաշվետու տարվա ընթացքում Անդրանիկ Թեւանյանը եկամուտ չի ստացել:

Քաղաքական եւ մասնագիտական ուղին

Անդրանիկ Թեւանյանը ծնվել է 1974 թվականին Երեւանում: Ավարտել է Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտը, այնուհետեւ՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի մագիստրատուրան եւ ասպիրանտուրան՝ ստանալով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Պահեստազորի լեյտենանտ է: Մասնագիտական գործունեությունը սկսել է պետական համակարգում՝ աշխատելով էկոնոմիկայի նախարարությունում որպես խորհրդական: Ավելի ուշ անցել է մեդիա ոլորտ, որտեղ ղեկավարել է «Ար» հեռուստաընկերության լրատվական ծառայությունը, ինչպես նաեւ Հանրային հեռուստատեսությամբ վարել տնտեսական-վերլուծական հաղորդաշար:

Թեւանյանը երկար տարիներ զբաղվել է նաեւ դասախոսական աշխատանքով՝ դասավանդելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում եւ Հայ-ռուսական համալսարանում: 2009 թվականին նա հիմնադրել է «7 օր» լրատվական կայքը եւ «Պոլիտէկոնոմիա» հետազոտական ինստիտուտը՝ շարունակելով գործունեությունը վերլուծական ու հանրային-քաղաքական դաշտում:

Քաղաքական գործունեությունը

Վերջին տարիներին Անդրանիկ Թեւանյանը ակտիվ ներգրավվածություն է ունեցել քաղաքական գործընթացներում: 2021 թվականին նա ընտրվել է Ազգային Ժողովի պատգամավոր «Հայաստան» դաշինքի համամասնական ցուցակով: Հետագայում ընդգրկվել է ընդդիմադիր քաղաքական գործընթացներում եւ ձեւավորել «Մայր Հայաստան» նախաձեռնությունը: Երեւանի ավագանու ընտրություններում այդ քաղաքական ուժը ստացել է 12 մանդատ, սակայն Թեւանյանը հրաժարվել է ավագանու մանդատից՝ շարունակելով գործունեությունը կուսակցական եւ դաշինքային հարթակներում:

Հիշեցնենք, որ 2026 թվականի հունիսի 7-ին նախատեսված Ազգային Ժողովի ընտրություններին ընդառաջ՝ «Մայր Հայաստան» կուսակցությունը հայտարարել է, որ ընտրություններին մասնակցելու է «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ միասին՝ Գագիկ Ծառուկյանի ներկայացրած «Առաջարկ Հայաստանին» ծրագրի շրջանակում: Անդրանիկ Թեւանյանը նշել էր, որ այդ որոշումը կայացվել է քննարկումների եւ քաղաքական երկխոսության արդյունքում: Նրա խոսքով՝ ծրագիրը գնահատվել է որպես հանրային լայն մասնակցություն ապահովող նախաձեռնություն, որտեղ քաղաքացիների առաջարկներն ու խնդիրները դառնում են քաղաքական օրակարգի հիմք: Թեւանյանը նաեւ ընդգծել էր, որ «Մայր Հայաստանը» ծրագրին միացել է որպես համահեղինակ՝ նպատակ ունենալով այն համալրել սեփական գաղափարներով եւ առաջարկվող լուծումներով:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՔԱՆԻ՞ ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ ԵՆ ԾԱԽՍԵԼ

ArmLur.am-ը ուսումնասիրել է ԿԸՀ-ի հրապարակած տվյալները, ըստ որի՝ հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նախընտրական հիմնադրամներում մայիսի 8-ի դրությամբ արդեն շրջանառվել է 120 մլն 840 հազար դրամ: Այդ գումարից 81 մլն 122 հազար 500 դրամն արդեն ծախսվել է, իսկ հաշիվներում մնացել է 39 մլն 717 հազար 500 դրամ:

Ամենախոշոր ֆինանսական շրջանառությունը գրանցել է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որի նախընտրական հիմնադրամ մուտք է եղել 40 մլն դրամ: Դրանցից արդեն ծախսվել է 28 մլն 52 հազար դրամ, իսկ մնացորդը կազմում է 11 մլն 948 հազար դրամ: Ֆինանսական ակտիվությամբ երկրորդը

«Քաղաքական պայմանագիր» կուսակցությունն է. հիմնադրամ մուտք է եղել 20 մլն դրամ, ծախսվել՝ 16 մլն 900 հազար 400 դրամ, մնացել՝ 3 մլն 99 հազար 600 դրամ:

«Հանուն հայրենիքի ժողովրդավարության, պաշտպանների դաշինք» կուսակցության հիմնադրամ մուտքերը կազմել են 17 մլն 288 հազար դրամ, որից ծախսվել է 13 մլն 464 հազար դրամը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցության հաշվին մուտք է եղել 15 մլն դրամ, ծախսվել՝5 մլն 383 հազար դրամ, մնացել՝ 9 մլն 617 հազար դրամ:

«Հայաստան» կուսակցությունների դաշինք նախընտրական հիմնադրամ մուտք է եղել 11 մլն 800 հազար դրամ, որից 11 մլն 50 հազար դրամն արդեն ծախսվել է: Մնացորդը կազմում է ընդամենը 750 հազար դրամ:

«Հանրապետություն» կուսակցություն հիմնադրամ մուտք է եղել 5 մլն դրամ, ծախսվել՝2 մլն 783 հազար դրամ:

ՀԱԿ-ի նախընտրական հիմնադրամ մուտք է եղել 4 մլն 200 հազար դրամ, ծախսվել՝2 մլն 922 հազար դրամ:

«Նոր ուժ» ռեֆորմիստական կուսակցության դեպքում հիմնադրամի մուտքերը եղել են 1 մլն 7 հարյուր հազար դրամ, որից 5 հարյուր հազարը արդեն ծախսվել է:

Մինչդեռ ընտրություններին մասնակցող մի շարք ուժերի հիմնադրամներում դեռեւս որեւէ դրամական շարժ չի արձանագրվել: Այդ թվում են «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքը, Հայաստանի շնորհապետական կուսակցությունը, «Միասնության թեւեր»-ը, «Ազգային ժողովրդավարական բեւեռ»-ը, «Քոչի ազգային վերածնունդ եւ ազգի զարթոնք» կուսակցությունը, Քրիստոնեա-ժողովրդավարական կուսակցությունը, «Ալյանս» առաջնական ցենտրիստական կուսակցությունը, «Ժողովրդավարական համախմբում»-ը եւ «Դեմոկրատիա օրենք կարգապահություն» կուսակցությունը:

Հիշեցնենք, որ Հայաստանում նախընտրական քարոզարշավը պաշտոնապես մեկնարկել է մայիսի 8-ին եւ կշարունակվի մինչեւ հունիսի 5-ը: Ընտրություններին մասնակցում է 19 քաղաքական ուժ՝ 17 կուսակցություն եւ 2 դաշինք:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Ըստ վիճակագրական տվյալների՝նախորդ շաբաթվա ընթացքում տուժել է 70, զոհվել՝ 11 մարդ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Նորք Հոմ Ռիթեյլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /ՀՎՀՀ՝ 08258445, իրավաբանական հասցե՝ ք.Երեւան, Գրիբոյեդովի փ. 25/27շ/, հայտնում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային գործարքների համար կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝ՀՀ, ԵՐԵՎԱՆ «ՆՈՐՔ ՀՈՄ ՌԻԹԵՅԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ 2

РА ЕРЕВАН ОБЩЕСТВО С ОРГАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ «НОРК ХОМ РИТЕЙЛ» 2

ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ДЛЯ ТАМОЖЕННЫХ СДЕЛОК

08258445

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ.-ի ապրիլի 17-ից: Հայտարարվում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ին կորցված վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Նորք Հոմ Ռիթեյլ» ՍՊԸ
Ամսաթիվ՝05.05.2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Նորք Ինդասթրիալս» փակ բաժնետիրական ընկերությունը /ՀՎՀՀ՝ 00046091, իրավաբանական հասցե՝ ք.Երեւան, Գրիբոյեդովի փ. 25/27շ/ հայտնում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային ձեւակերպումների համար կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝ ՀՀ, ԵՐԵՎԱՆ «ՆՈՐՔ ԻՆԴԱՍԹՐԻԱԼՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ *

РА ЕРЕВАН ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «НОРК ИНДАСТРИАЛС» *
RA YEREVAN «NORK INDUSTRIALS» CLOSED JOINT STOCK COMPANY *

00046091

ՄԱՔՍԱՅԻՆ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ДЛЯ ТАМОЖЕННЫХ ОФОРМЛЕНИЙ
FOR CUSTOMS DOCUMENTS

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ.-ի ապրիլի 17-ից: Հայտարարվում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ին կորցված վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Նորք Ինդասթրիալս» ՓԲԸ
Ամսաթիվ՝05.05.2026թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով «Իմէքս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /ՀՎՀՀ՝ 00847479, իրավաբանական հասցե՝ ք.Երեւան, Թբիլիսյան խճուղի 25/ հայտնում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ից կորել է Ընկերությանը պատկանող մաքսային գործարքների համար կլոր կնիքը, որի վրա պարունակվել է հետեւյալ տեղեկատվությունը՝ ՀՀ, ք. ԵՐԵՎԱՆ ԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ «ԻՄԷՔՍ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

РА г. ЕРЕВАН ОБЩИНА АВАН ОБЩЕСТВО С ОРГАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ «ИМЕКС ГРУП»

ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ДЛЯ ТАМОЖЕННЫХ СДЕЛОК

00847479

Վերոնշյալ կնիքը ճանաչվում է անվավեր 2026թ.-ի ապրիլի 17-ից: Հայտարարվում է, որ 2026թ.-ի ապրիլի 17-ին կորցված վերոնշյալ կնիքի օգտագործմամբ ձեւակերպված ցանկացած փաստաթուղթ համարվում է անվավեր եւ չի կարող առաջացնել որեւէ իրավական հետեւանք:

«Իմէքս Գրուպ» ՍՊԸ
Ամսաթիվ՝05.05.2026թ.

ԻՆՉՊԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ ԿՓՈԽԵ՞Ն

ArmLur.am-ը տեղեկացավ, որ e-draft իրավական ակտերի նախագծերի միասնական հարթակում քննարկման է դրվել օրենքի նախագիծ, որով առաջարկվում է փոփոխություն կատարել «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքում:



Նախագծով նախատեսվում է վերանվանել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը՝ այն դարձնելով «ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության եւ արհեստական բանականության նախարարություն»:

Փոփոխության հիմնավորման մեջ նշվում է, որ նախարարության անվանափոխության նպատակը վերջին շրջանում դրա լիազորությունների ընդլայնման արտացոլումն է: Մասնավորապես, խոսքը վերաբերում է արհեստական բանականության եւ ամպային տեխնոլոգիաների ոլորտներում նախարարությանը վերապահված նոր գործառույթներին:

Փաստաթղթի համաձայն՝ 2025 թվականի դեկտեմբերի 4-ին Ազգային Ժողովի կողմից ընդունված օրենքով նախարարությունն արդեն ստացել է նոր լիազորություններ՝ կապված արհեստական բանականության ոլորտում պետական քաղաքականության մշակման եւ իրականացման հետ: Նոր գործառույթների շրջանակում ներառված են նաեւ ամպային հաշվողական ծառայությունների ներդրման եւ զարգացման ուղղությունները: Նախագծի հիմնավորման մեջ ընդգծվում է նաեւ, որ այս նախաձեռնությունը բխում է վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արձանագրությունից, որով հանձնարարություն էր տրվել դիտարկել արհեստական բանականության թեման նախարարության անվան եւ գործառույթների շրջանակում ընդգրկելու հարցը: Հետագայում համապատասխան հանձնարարական է տրվել նաեւ փոխվարչապետի կողմից՝ մշակելու օրենսդրական փոփոխությունների փաթեթ:

Առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է, որ նախարարության նոր անվանումը կարտացոլի պետության արդիական թվային օրակարգը, որը ներառում է արհեստական բանականության, թվայնացման եւ տեխնոլոգիական զարգացման քաղաքականության ձեւավորումը: Նախագծով սահմանվում է, որ օրենքն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը, իսկ ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները պետք է կատարվեն վեցամսյա ժամկետում: Ներկայացված հիմնավորման համաձայն՝ նախաձեռնությունը բյուջետային լրացուցիչ ազդեցություն չի առաջացնի: Օրենքի նախագիծը մշակվել է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից եւ ներառված է կառավարության 2021-2026 թվականների ծրագրի տեխնոլոգիական զարգացման եւ թվայնացման ուղղությունների շրջանակում: Այդ ծրագրում առանձնահատուկ շեշտադրվում են թվային միջավայրի ձեւավորումը, նորարարական լուծումների խթանումը, ինչպես նաեւ տեխնոլոգիական զարգացումը՝ որպես պետական կառավարման եւ տնտեսության առաջընթացի կարեւոր բաղադրիչներ:

Նախագծի հանրային քննարկման ժամկետը սահմանվել է 2026 թվականի մայիսի 11-ից մինչեւ մայիսի 26-ը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐՎԵԼ Է ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ

Կոնվերս Բանկի գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Հրանտ Հակոբյանն ապրիլի 29-ին քվեարկությամբ ընտրվել է AmCham Հայաստանի խորհրդի անդամ: Ընտրությունը տեղի է ունեցել կազմակերպության Ընդհանուր տարեկան ժողովի ընթացքում, որտեղ ամփոփվել են նաեւ նախորդ տարվա գործունեության արդյունքները եւ սահմանվել կազմակերպության առաջիկա ռազմավարական ուղղությունները:

Հրանտ Հակոբյանն այս առիթով նշել է. «Մասնավոր հատվածը Հայաստանում ներդրումների, զբաղվածության եւ նորարարության հիմնական շարժիչն է: Որպես բանկի ղեկավար՝ ես մշտապես շփվում եմ բիզնեսի հետ եւ հստակ պատկերացում ունեմ այն մարտահրավերների մասին, որոնց առջեւ կանգնած են ընկերությունները՝ կապիտալի հասանելիությունից մինչեւ կարգավորման բացեր, անորոշություն, ավելի ճկուն բիզնես միջավայրի անհրաժեշտություն: Ըստ այդմ, Խորհրդում իմ գործունեությունը կհիմնվի գործնական փորձառության, պրագմատիկ մոտեցման վրա եւ միտված կլինի բիզնեսի հետ հարաբերությունների սերտացմանը եւ AmCham-ի՝ որպես բիզնեսի շահերի արդյունավետ պաշտպանի դիրքի ամրապնդմանը»:

Կոնվերս Բանկի մասին

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն ունիվերսալ բանկ է, որը գործում է Հայաստանում եւ տրամադրում է բանկային ծառայությունների լայն շրջանակ ֆիզիկական անձանց, փոքր եւ միջին ձեռնարկություններին, ինչպես նաեւ կորպորատիվ հաճախորդներին:

AmCham-ի մասին

Հայաստանում Ամերիկայի առեւտրի պալատը անկախ բիզնես ասոցիացիա է, որը գործում է Հայաստանում 2000 թվականից: ԱԱՊՀ-ը ներկայացնում է 170 անդամ ընկերությունների շահերը՝ Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներից: Ավելի նպաստավոր գործարար միջավայր ստեղծելու եւ լավագույն գործարար փորձը խթանելու համար ԱԱՊՀ-ն համագործակցում է ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հետ եւ սերտորեն համագործակցում է ՀՀ կառավարության, միջազգային կազմակերպությունների եւ գործարար համայնքի հետ:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

«ԶԵՅՐՕ»՝ ՆԵՐԲԵՌՆԵՔ, ՓՈՐՁԵՔ

Մոռացեք ChatGPT-ի, Gemini-ի եւ մյուս արհեստական բանականությունների մասին: Դրանց մրցակիցը, ըստ ստեղծողների, արդեն կա՝ հայկական առաջին արհեստական բանականությունը՝ «Զեյրո»-ն: «Զեյրո»-ն առանձնանում է իր zero click գաղափարով. օգտատերը պարզապես ասում է, թե ինչ է ուզում անել, իսկ հավելվածը կատարում է գործողությունը՝ առանց հավելյալ քայլերի: Նախագծի հեղինակը 17-ամյա Արմանն է, ով ծրագրավորումով զբաղվում է դեռ 9 տարեկանից: Նրա խոսքով՝ գաղափարը ծնվել է մարդկանց առօրյան ավելի հեշտ դարձնելու ցանկությունից: Սակայն գաղափարը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր նաեւ ֆինանսավորում: Արմանը իր մշակած կոդերը ուղարկել է գործարար Սամվել Թադեւոսյանին, որը հետագայում ներդրում է կատարել նախագծում: «Զեյրո»-ի ստեղծման համար ներդրվել է 150 միլիոն դոլար: Սամվել Թադեւոսյանը նշեց, որ «Զեյրօն» մեկ քայլ առաջ է գիգանտներից:

Անվանումն էլ պատահական չէ: «Զեյրո»-ն առաջացել է zero click արտահայտությունից: Ստեղծողները վստահեցնում են՝ «Զեյրո»-ում անձնական տվյալների արտահոսքն անհնար է, իսկ նպատակը միայն հայկական շուկան չէ: Նրանք արդեն մտածում են համաշխարհային ներկայության մասին: Իսկ ծրագրի հեղինակ 17-ամյա Արմանը մեծ նպատակ ունի. «Ուզում ենք սա դարձնել համաշխարհային պրոյեկտ»: Համացանցում լայն տարածում գտած զեբրի պատմությունը եւս նախագծի մարքեթինգային ներկայացման մի մասն էր: Այն ընտրվել էր որպես յուրահատուկ եւ հիշվող սիմվոլ: Այսօր «Զեյրո»-ն արդեն հասանելի է App Store եւ Play Market հարթակներում: Հայկական առաջին արհեստական բանականությունը արդեն հասանելի է բոլորին՝ մեկ նպատակով՝ խնայել մարդկանց ժամանակը եւ առօրյան դարձնել ավելի պարզ: Ներբեռնեք, փորձեք, սովորեք եւ սովորեցրեք՝ հայկական «Զեյրո»-ի հետ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՎԵԼԻ ՈՒԺԵՂ Է

ԱՅՆ ՕՐԸ, ԵՐԲ ՄԵՔԵՆԱՆ ԳԱՀԸՆԿԵՑ ԱՐԵՑ ԹԱԳԱՎՈՐԻՆ

29 տարի առաջ՝ 1997 թվականի մայիսի 11-ին, IBM-ի Deep Blue համակարգիչը հաղթեց Գարի Կասպարովին մաչ-ռեւանշի վճռական խաղում՝ ընդմիշտ փոխելով արհեստական բանականության պատմության ընթացքը:

Արեւելյան ժամանակով ժամը 15:00-ին Մանհեթենի Equitable Center-ի փոքրիկ խաղասրահում Գարի Կասպարովը՝ շախմատի գործող չեմպիոնն ու FIDE-ի վարկանիշային պատմության ամենաբարձր գնահատված խաղացողը, նստեց մի մեքենայի դիմաց, որը չուներ ոչ աչք, ոչ նյարդ, ոչ էլ վախ: Տասնիններորդ քայլից հետո նա վեր կացավ ու գնաց՝ պարտված: Խաղը տեւեց մեկ ժամ մի փոքր ավել, բայց արձագանքները զգացվում են առ այսօր: 1997 թվականի մրցաշարը մատչ-ռեւանշ էր: Մեկ տարի առաջ Ֆիլադելֆիայում Կասպարովը հաղթել էր Deep Blue-ի նախորդ տարբերակին 4:2 հաշվով: Վստահ, բայց ոչ ինքնագոհ, նա համաձայնեց նոր մրցաշար խաղալ: IBM-ն այդ մեկ տարին ծախսել էր համակարգիչը լրջորեն կատարելագործելու վրա՝ ամրապնդելով վերջնախաղի տվյալների բազաները, կատարելագործելով գնահատման ֆունկցիան եւ ներգրավելով լրացուցիչ գրոսմայստերների՝ մեքենայի ռազմավարական տրամաբանության կարգավորման համար: Արդյունքը համակարգիչ էր, որը թիմը ոչ պաշտոնապես կոչել էր «Deeper Blue» («Ավելի խոր կապույտ»):

Մեքենան՝ տախտակի հետեւում

Deep Blue-ը բարակ նոութբուք կամ սովորական համակարգիչ չէր: Այն իրական հսկա էր՝ մոտ երկու մետր բարձրությամբ, շուրջ 700 կիլոգրամ քաշով, 32 զուգահեռ աշխատող պրոցեսորներով: Ամբողջ հզորությամբ այն վերլուծում էր վայրկյանում 200 միլիոն շախմատային դիրք՝ վայրկյանում 11,38 միլիարդ գործողության արագությամբ: Համեմատության համար՝ IBM-ի առաջին սուպերհամակարգիչը՝Stretch-ը, որը ներկայացվել էր 1961 թվականին, կատարում էր վայրկյանում 500-ից պակաս գործողություն:

Վեց խաղ, մեկ շրջադարձ

Մրցաշարն անցկացվեց մայիսի 3-ից 11-ը: Կասպարովը վստահ հաղթեց առաջին խաղը, եւ շախմատային աշխարհը շունչ քաշեց: Հետո եկավ 2-րդ խաղը: 36-րդ քայլում Deep Blue-ն կատարեց 36.axb5՝ մի քայլ, որն ականատես գրոսմայստերներին ապշեցրեց իր անհավանական մարդկայնությամբ. նուրբ, հեռատես դիրքային զոհաբերություն: Ցնցված Կասպարովը հանձնվեց, թեեւ շախմատի աշխարհում կարծում էին, որ նա կարող էր ոչ-ոքի գրանցել: Այդ պարտությունից հետո Կասպարովն այդպես էլ ամբողջությամբ չվերականգնվեց: 3-րդ, 4-րդ եւ 5-րդ խաղերն ավարտվեցին ոչ-ոքի, թեեւ բոլոր երեքում էլ Կասպարովի դիրքն ավելի լավն էր: 6-րդ խաղից առաջ հաշիվը հավասար էր՝ 2,5:2,5: Կասպարովն ընտրեց Կարո-Կան պաշտպանությունը՝ հուսալի, փորձված: Սակայն վաղ 7...h6 քայլը ձիու զոհաբերության հնարավորություն ստեղծեց, որը Deep Blue-ն անգիր էր արել: 8-րդ քայլին համակարգիչը կատարեց Nxe6՝ ագրեսիվ ֆիգուրի զոհաբերություն, որը ջախջախեց հակառակորդի դիրքը: 11 քայլ հետո Կասպարովը հանձնվեց:

Սկանդալ, ժառանգություն եւ հանգստի գնացած չեմպիոն

Շախմատային աշխարհն ապշած էր: Գրոսմայստեր Ջոն Ֆեդորովիչն արտահայտեց ընդհանուր կարծիքը. «Բոլորը զարմացան, որ նա հանձնվեց, որովհետեւ դեռ պայքարի շանսեր կային»: Կասպարովը IBM-ի թիմին մեղադրեց խաղի ընթացքում գրոսմայստերի ներգրավման համար, հատկապես 2-րդ խաղի կասկածելի քայլերի կապակցությամբ: IBM-ը հերքեց մեղադրանքները, բայց հրաժարվեց ներկայացնել համակարգչի որոշումների ամբողջական լոգերը: Սկանդալը երկար շարունակվեց, թեեւ 2016 թվականի հարցազրույցում Կասպարովն ընդունեց, որ իր եզրակացությունները չափազանցված էին: IBM-ը հրաժարվեց նոր մրցաշարից եւ Deep Blue-ն հանեց շրջանառությունից. այն փոխանցվեց Վաշինգտոնի Սմիթսոնյան ինստիտուտին:

1997թ. մայիսի 11-ին պատմության մեջ առաջին անգամ համակարգիչը հաղթեց գործող չեմպիոնին դասական կանոնների համաձայն անցկացված մրցաշարում: IBM-ն հետո ստեղծեց Watson-ն ու Blue Gene-ն. ողջ ԱԲ ոլորտը ձգտում էր ապացուցել, որ մեքենաներն ի վիճակի են գերազանցել մարդուն բացառապես մտավոր համարվող բնագավառներում:

Հին չինական գո խաղը՝ շախմատից անհամեմատ բարդ, հաջորդ թիրախն էր: Google-ի AlphaGo-ն 2016 թվականին խոցեց նաեւ այն: Բայց այս ամենը սկսվեց գրեթե երեք տասնամյակ առաջ Մանհեթենի այն խաղասրահից եւ այն պահից, երբ աշխարհի չեմպիոնը ցածրաձայն ասաց. «Համակարգիչն ավելի ուժեղ է, քան մենք ակնկալում էինք»:

ՀԱՎԱՔՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՑԱՆԿԱԼԻ ԺԱՄԱՑՈՒՅՑՆԵՐ

Rolex Daytona «Paul Newman» ժամացույց գտնելը նման է ժամացույցների խոսի մեջ ասեղ փնտրելուն, բայց Sotheby's-ը արդեն իսկ կատարել է հավաքորդների համար նախատեսված աշխատանքը: Ռոբ Ռիփորթի տվյալներով՝ աճուրդի տունը այս ամիս Ժնեւում կայանալիք «Important Watches» աճուրդի ժամանակ առաջարկում է նման երեք օրինակ:

Այս հատուկ Daytona կոնֆիգուրացիայի պատմությունը սկիզբ է առնում 1963 թվականից, երբ Rolex-ը ներկայացրեց Daytona-ն (Ref. 6239)՝ այսպես կոչված «էկզոտիկ ցուցանակով»: Ավելի ուշ՝ 1960-ական եւ 1970-ական թվականներին, ապրանքանիշը թողարկեց վեց տարբեր նմուշներ՝ փոխելով շրջանակը՝ մետաղից մինչեւ ակրիլ, անցնելով պտուտակավոր եւ ստանդարտ քրոնոգրաֆային կոճակների միջեւ եւ փորձարկելով հայտնի ցուցանակի դիզայնը: Սկզբում այս Daytona-ները Rolex-ի հաճախորդների շրջանում ժողովրդականություն չէին վայելում, բայց դա կտրուկ փոխվեց Փոլ Նյումանի շնորհիվ: Լեգենդար դերասանը եւ մրցարշավորդը 1960-ականների վերջին կնոջից՝ Ջոան Վուդվարդից, նվեր ստացավ Daytona (Ref. 6239) եւ կրեց այն երկար տարիներ: Նա «էկզոտիկ ցուցատախտակը» դարձրեց ճանաչելի, եւ ժամանակի ընթացքում այս տարբերակը հայտնի դարձավ որպես «Paul Newman»: Նրա պաշտամունքային մոդելը՝ սպիտակ ցուցատախտակով եւ սեւ քրոնոգրաֆային հաշվիչներով՝ այսպես կոչված «պանդա ցուցատախտակով», պողպատե պատյանով, շրջանակով եւ ապարանջանով, վաճառվեց Phillips աճուրդում 2017 թվականին՝ ռեկորդային 17.8 միլիոն դոլարով՝ ամրապնդելով Paul Newman Daytona-ի կարգավիճակը որպես աշխարհի ամենացանկալի ժամացույց եւ կտրուկ բարձրացնելով նմանատիպ իրերի գները:

Sotheby's-ի կողմից այս ամսվա ընթացքում առաջարկված առաջին լոտը չափազանց հազվագյուտ ոսկե տարբերակն է (Ref. 6241), որը արտադրվել է 1969 թվականին: Rolex-ը արտադրել է շատ ավելի քիչ ոսկե Daytona, քան պողպատեները, ինչը դրանք դարձնում է հատկապես հազվագյուտ: Այս կոնկրետ օրինակը պատրաստված է 14 կարատանոց ոսկուց, այլ ոչ թե ստանդարտ 18 կարատանոցից, ինչը ենթադրում է հնարավոր ամերիկացի հաճախորդի առկայություն. ԱՄՆ շուկայի համար ապրանքանիշն օգտագործել է ավելի ցածր կարատանոց ոսկի՝ներմուծման մաքսատուրքերը նվազեցնելու համար: Այն եզակի է դարձնում «John Player Special» ցուցանակը՝ սեւ ֆոն՝ դեղին-ոսկեգույն հաշվիչներով: Անվանումը վերաբերում է բրիտանական ծխախոտային ընկերությանը՝John Player & Sons-ին, որը Ֆորմուլա 1-ի հովանավոր է, որի գունային սխեման համապատասխանում էր ծխախոտի տուփերի դիզայնին: Ինչպես բոլոր Paul Newman Daytona-ների դեպքում, ենթացուցանակներն ունեն Արտ Դեկո ոճի թվանշաններ:

Ենթադրվում է, որ 14 կարատանոց ոսկուց 400-ից պակաս Ref. 6241 է արտադրվել, եւ դրանցից միայն մի քանիսն են կոնֆիգուրացվել որպես John Player Special: Sotheby's-ի տվյալներով՝ այս օրինակը մնում է «գերազանց վիճակում» նույնիսկ կես դարից ավելի անց: Աճուրդի տունը այն անվանում է վերջին տարիների ամենաշանակալի վինտաժային Rolex քրոնոգրաֆ մոդելներից մեկը: Գնահատական՝ $570,000-ից մինչեւ $1 միլիոն:

Երկրորդ Paul Newman Daytona-ն 18 կարատանոց ոսկե տարբերակ է (Ref. 6239), թողարկվել է 1979 թվականին: Առաջին անգամ ներկայացվել է 1969 թվականին, Ref. 6239-ը ունի դասական մետաղական շրջանակ, ինչպես Փոլ Նյումանի սեփական ժամացույցները, եւ պտուտակավոր քրոնոգրաֆ կոճակներ: Ոսկե տարբերակները արտադրվել են ավելի փոքր քանակությամբ, ինչը դրանք դարձնում է հատկապես հազվագյուտ: Այս լոտը առաջին անգամ աճուրդի է հանվել իր սկզբնական սեփականատիրոջ կողմից այն գնելուց գրեթե 50 տարի անց: Ակնկալվող գինը կազմում է $380,000-ից մինչեւ $760,000:

Երրորդ լոտը պողպատե Daytona-ն է (Ref. 6239), արտադրված 1967 թվականին: Այն նման է Փոլ Նյումանի ժամացույցին, բայց ունի «հակադարձ պանդա» ցուցատախտակ՝ սպիտակ՝ սեւ շեշտադրումներով: Սա այն հատկապես գրավիչ է դարձնում հավաքորդների համար: Գնահատվող գինը 128,000-ից մինչեւ 255,000 դոլար է, որը համեմատաբար ցածր է մյուս լոտերից եւ այն դարձնում է երեքից ամենամատչելին:

Sotheby's-ի կարեւոր ժամացույցների աճուրդը տեղի կունենա մայիսի 10-ին Ժնեւի Mandarin Oriental հյուրանոցում:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿԿԱՅԱՆԱ ԼԱՍ ՎԵԳԱՍՈՒՄ

2027 թվականի ըմբշամարտի վարկանշային Աշխարհի առաջնությունը կայանալու է սեպտեմբերի 11-19-ը Լաս Վեգասում: Մրցաշարը կընդունի Լաս Վեգասի համալսարանի պատմական Թոմաս եւ Մակ կենտրոնը, որը 20 հազար հանդիսական է տեղավորում: Աշխարհի առաջնությունն ԱՄՆ կվերադառնա 12 տարի անց, վերջին անգամ այնտեղ մրցաշարը կայացել էր 2015 թվականին: Լաս Վեգասում կխաղարկվեն 2028 թվականին Լոս Անջելեսում կայանալիք Օլիմպիական խաղերի առաջին ուղեգրերը: 18 քաշային կարգերի 72 ըմբիշներ կապահովեն իրենց մասնակցությունն Օլիմպիական խաղերում: Հայտնի են նաեւ մինչեւ 17, 20 ու 23 տարեկանների Աշխարհի առաջնությունների անցկացման վայրերը:

«ԲԱՐՍԵԼՈՆԱ»-Ի ՉԵՄՊԻՈՆՈՒԹՅՈՒՆԸ

«Բարսելոնա»-ն 2:0 հաշվով հաղթանակ է տոնել «Ռեալ»-ի նկատմամբ եւ առաջնության ավարտից 3 տուր առաջ 2-րդ տարին անընդմեջ հռչակվել Իսպանիայի չեմպիոն: Հանսի Ֆլիկի թիմը վաստակել է 91 միավոր ու անհասանելի դարձել 77 միավոր ունեցող «Ռեալ»-ից: Կատալոնյան ակումբը մադրիդցիներին տանը չի պատրվում 2023 թվականի հոկտեմբերից սկսած: «Ես երբեք չեմ մոռանա այս պահը: Հիանալի թիմ ունեմ, որով հիանում եմ, հպարտանում եմ իմ տղաներով: Աննկարագրելի է երկրպագուների հետ կիսել էլ Կլասիկոյում տոբած հաղթանակով»,- հաղթանակից հետո խոստովանել է Ֆլիկը: Ի դեպ, Ֆլիկի գլխավորությամբ «Բարսելոնա»-ն «Ռեալ»-ի դեմ անցկացրած 7 խաղում տոնել է 6 հաղթանակ: Իսպանացի լրագրող Ալեքսիս Մարտինը վիճակագրություն է ներկայացրել, որտեղ հայտնում է էլ Կասիկոյի 124-ամյա պատմության մասին: Ըստ դրա՝ 1902 թվականից մինչ այսօր նրանք միմյանց դեմ խաղացել են 264 անգամ՝ յուրաքանչյուրը տոնելով 106-ական հաղթանակ, 52 անգամ գրանցելով ոչ-ոքի:

«ՆՈԱ»-Ն ՀԱՂԹԵԼ Է

Հայաստանի ֆուտբոլի առաջնությունն աստիճանաբար մոտենում է ավարտին: Երեկ ավարտվել է 25-րդ տուրը, որից հետո մրցաշարային աղյուսակը շարունակում է 54 միավորով գլխավորել «Արարատ-Արմենիա»-ն: Վերջինս տուրի կենտրոնական խաղում 0:4 հաշվով պարտություն է կրել իր առաջիկա հետապնդողից՝ «Նոա»-ից: Գործող չեմպիոնը կարեւոր հաղթանակից հետո վաստակել է 49 միավոր ու ընթանում է 2-րդ տուրում, չնայած մեկ հանդիպում պակաս է անցկացրել: 3-րդ ու 4-րդ տեղերը կիսող «Փյունիկ»-ը եւ «Ուրարտու»-ն հաղթել են համապատասխանաբար ԲԿՄԱ-ին եւ «Արարատ»-ին՝ իրենց ակտիվում ունենալով 48 միավոր: Առաջնության նախավերջին տուրը մեկնարկելու է մայիսի 16-ին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մարատ Սարգսյանս, հայտարարում եմ, որ կորցրել եմ իմ տեխնիկայի՝ ՄՏՅ մակնիշի տրակտորի տեխանձնագիրը եւ համարանիշները՝ 50-11 SL:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մայիսի 14-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Դիմակահանդես» բալետը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կցանկանայի իմանալ, թե երբ են ամփոփվում սովորողի բացակայությունները:

Ալինա Հակոբյան,
38 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Սովորողի բացակայությունների հաշվառումն իրականացվում է ուսումնական տարվա ընթացքում: Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը դեռեւս ներդրված չէ, եւ մայիսի 20-ի դրությամբ տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում սովորողն արդեն 60 ժամից ավելի բացակայություն ունի, ամփոփված տվյալների հիման վրա մանկավարժական խորհրդի նիստում հաստատվում է այդ սովորողի համար լրացուցիչ գրավոր աշխատանքների իրականացումը մայիսի 20-24-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը դեռեւս ներդրված չէ, եւ մայիսի 20-23-ն ընկած ժամանակահատվածում հաճախումների հիման վրա է որոշվելու սովորողի 60 ժամից ավելի բացակայության փաստը, այսինքն՝ սովորողը 60 ժամից ավելի բացակայություն ունենալու ռիսկի տակ է գտնվում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ուսումնական պարապմունքներին սովորողի ներկայությունն ապահովելու համար: Անհնարինության դեպքում՝ մայիսի 23-ի դրությամբ տվյալ ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում 60 ժամից ավելի բացակայություն ունենալու պարագայում ամփոփված տվյալների հիման վրա մանկավարժական խորհրդի (ըստ անհրաժեշտության՝ արտահերթ) նիստում հաստատվում է այդ սովորողի համար լրացուցիչ գրավոր աշխատանքների իրականացումը մայիսի 27-30-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

Այն դասարաններում, որտեղ հանրակրթության նոր չափորոշիչը ներդրվել է, եւ մայիսի 20-23-ն ընկած ժամանակահատվածում հաճախումների հիման վրա է որոշվելու սովորողի 200 ժամից ավելի բացակայության փաստը, այսինքն՝ սովորողը 200 ժամից ավելի բացակայություն ունենալու ռիսկի տակ է գտնվում, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել՝ ուսումնական պարապմունքներին սովորողի ներկայությունն ապահովելու համար: Անհնարինության դեպքում՝ մայիսի 23-ի դրությամբ ամփոփված տվյալների հիման վրա մանկավարժական խորհրդի (ըստ անհրաժեշտության՝ արտահերթ) նիստում հաստատվում է տվյալ ուսումնական տարվա ընթացքում 200 ժամից ավելի բացակայություն ունեցող սովորողի համար լրացուցիչ քննությունները մայիսի 27-30-ն ընկած ժամանակահատվածում կազմակերպելու մասին որոշում:

ՀՀ ԿԳՄՍ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք ՀՀ քաղաքացիությունից հրաժարվելու պարագայում հնարավոր է խուսափել պարտադիր զինվորական ծառայությունից:

Մանվել Գալստյան,
44 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինվորական հաշվառումից հանվում են օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձինք: Քաղաքացիները պարտավոր են զինվորական հաշվառման, ինչպես նաեւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչվելու համար ներկայանալ իրենց հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո բոլոր զորակոչիկները պարտավոր են ծանուցագրում նշված ժամկետում ներկայանալ այն զինվորական կոմիսարիատ, որտեղ նրանք հաշվառված են: Զինվորական ծառայությունից պահեստ արձակված քաղաքացիները պարտավոր են յոթն օրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ՝ զինվորական հաշվառման համար: Հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրը փոխելու դեպքում զինապարտները զինվորական հաշվառման կանգնելու համար պարտավոր են ներկայանալ համապատասխան զինվորական կոմիսարիատ՝ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) նոր վայր ժամանելուց հետո՝ յոթն օրյա ժամկետում: Զինվորական ծառայության ընթացքում դատապարտված եւ ազատազրկման ձեւով պատիժ կրած անձինք պարտավոր են պատժի կրումից ազատվելուց պահից յոթնօրյա ժամկետում ներկայանալ հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ: Զինապարտներն իրենց առողջական վիճակի, ընտանեկան դրության, հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի, կրթության, աշխատավայրի եւ պաշտոնի փոփոխությունների մասին պարտավոր են յոթնօրյա ժամկետում հայտնել հաշվառման (հաշվառում չունեցողները՝ փաստացի բնակության) վայրի զինվորական կոմիսարիատ:

ՀՀ պաշտպանության ծառայություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Խոշոր ավտովթար Արարատի մարզում. 38-ամյա վարորդը «Opel»-ով բախվել է հողաթմբերին, ապա գազատար խողովակի հենասյուներին եւ գլխիվայր հայտնվել դաշտում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 3 + 7 + 15 + 20
	Կոտայքի լեռներ	+ 4 + 7 + 16 + 19
	Կոտայքի նախալեռներ	+ 10 + 10 + 21 + 23
	Գեղարքունիք	+ 4 + 7 + 16 + 20
	Լոռի	+ 5 + 9 + 18 + 22
	Տավուշ	+ 7 + 10 + 19 + 20
	Արագածոտնի լեռներ	+ 3 + 6 + 14 + 18
	Արագածոտնի նախալեռներ	+ 9 + 14 +19 + 24

	Արարատ	+ 11 + 14 + 22 + 25
	Արմավիր	+ 11 + 15 + 25 + 27
	Վայոց ձորի լեռներ	+ 4 + 7 + 14 + 18
	Վայոց ձորի նախալեռներ	+ 11 + 15 + 24 + 27
	Սյունիքի լեռներ	+ 3 + 6 + 14 + 17
	Սյունիքի նախալեռներ	+ 5 + 9 + 19 + 23
	Սյունիքի հովիտներ	+ 12 + 15 + 26 + 29
	Երեւան	+ 12 + 14 + 24 + 26

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.05.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*